Վահագն Դալլաքյան[1]

ՊԱՐՏԱՊԱՆԻ ԳՈՒՅՔԻ ՎՐԱ ԴՐՎՈՂ ԱՐԳԵԼԱՆՔԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի[2] 43 հոդվածի 1-ին մասի ձևակերպման համաձայն՝ պարտապանի դրամական պարտավորություններով նրա գույքի վրա բռնագանձում տարածելը ներառում է գույքի վրա արգելանք դնելը, այն առգրավելը և հարկադիր իրացնելը աճուրդի կամ ուղղակի վաճառքի միջոցով:

Սույն հոդվածում կանդրադառնանք բռնագանձումը կազմող կատարողական գործողություններից արգելանքի իրավաբան բնույթի և դրա գործողության հետազոտմանը: Նշված հարցերի պարզաբանման նպատակով հարկ է վեր հանել, մի կողմից սահմանափակումների այն ծավալը, որոնք առաջանում են պարտապանի համար արգելանքի կիրառման արդյունքում, իսկ մյուս կողմից՝ այն իրավունքները, որոնք ձեռք է բերում պահանջատերը:

Հարկ է նշել, որ արգելանքի բովանդակության սահմանումը գիտական վեճի առարկա է: ԴԱՀԿ մասին ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանի գույքի կամ պարտապանի մոտ գտնվող՝ հայցվորին (պահանջատիրոջը) պատկանող գույքի վրա արգելանք դնելը ներառում է դրա գույքագրումը, գույքը տնօրինելը արգելելը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ օգտագործման իրավունքը սահմանափակելը, այն առգրավելը և ի պահ հանձնելը: Այդպիսով, օրենքը, որպես արգելանքի պարտադիր տարր, սահմանում է գույքագրումը և գույքը տնօրինելն արգելելը, իսկ օգտագործման իրավունքը սահմանափակելը, գույքն առգրավելը և ի պահ հանձնելը սահմանում է որպես արգելանքի ֆակուլտատիվ տարր:

Քննարկվող խնդրի ուսումնասիրությամբ զբաղված հեղինակների մեծ մասը ևս, որպես արգելանքը կազմող պարտադիր կատարողական գործողություններ, նշում է գույքագրումը և տնօրինման ար-

---

[1] ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ, գիտ. ղեկավար՝ ի. գ. թ., դոցենտ Վ. Վ. Հովհաննիսյան:

[2] Ընդունվել է 05.05.1998 թ., ՀՕ-221, սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 1998.06.15/12(45), այսուհետ՝ ԴԱՀԿ մասին ՀՀ օրենք:

գելքը[3]: Սակայն կան նաև այլ տեսակետներ: Այսպես, հեղինակների մի խումբ գտնում է, որ արգելանքի միակ պարտադիր տարրը գույքի տնօրինման արգելքն է, իսկ մնացածը ֆակուլտատիվ են[4]: Համանման տեսակետ են ներկայացնում նաև այլ հեղինակներ, ովքեր արգելանքը բնորոշում են որպես սեփականատիրոջը կամ տիրապետողին ուղղված արգելք՝ տնօրինելու (երբեմն՝ նաև տիրապետելու և օգտագործելու) արգելադրված գույքը[5]:

Կան նաև հեղինակներ, ովքեր արգելադրման արդյունքում պարտապանի սեփականության իրավունքի սահմանափակումն առավելապես տեսնում են տիրապետման իրավազորության սահմանափակման մեջ՝ արգելանքը կազմող կատարողական գործողությունների կազմում ընդգծելով պահատվությունը[6]: Ի հակադրություն այդ տեսակետների՝ Լ. Կ. Կրամարենկոն արգելանքի հասկացության մեջ գույքի պահպանությունը չի ներառում[7]:

Չնայած նրան, որ ԴԱՀԿ մասին օրենքը գույքագրումը համարում է արգելանքի պարտադիր տարր, այդուհանդերձ, մեր կարծիքով, պարտապանի բնակարանում գտնվելու կամ գործունեություն ծավալելու վայրում կատարվող գույքագրումն առաջին հերթին պարտապանի գույքի բացահայտման միջոց է՝ ի թիվս պարտապանի գույքի

---

[3] Տե՛ս **Газиянц Л. И.,** Иски об освобождении имущества от ареста. Москва, 1959, էջ 5, **Заворотько П. П.,** Процессуальные гарантии исполнения судебного решения. Москва, Юрид. лит., 1974, էջ 321, **Абрамова А. И.,** Судопроизводство по делам об освобождении имущества от ареста: Автореф. дис. …канд. юрид. наук. Москва, 1984, էջ 7, Советский гражданский процесс: Учебник / Отв. ред. М. С. Шакарян (բաժնի հեղ.՝ Сергун А. К.). Москва: Юридическая литература, 1985, էջ 402, Советский гражданский процесс: Учебник. 2-е изд. переработанное и дополненное / Под ред. Комиссарова К. И., Семенова В. М. (բաժնի հեղ.՝ Воложанин В. П.). Москва: Юридическая литература, 1988, էջ 413:

[4] Տե՛ս **Малешин Д. Я.,** Суд в процессе исполнения судебных постановлений: Дис. …канд. юрид. наук. Москва, 2002, էջ 149:

[5] Տե՛ս **Цыбуленко А. П., Тархов В. А.,** Освобождение имущества от ареста: Учебное пособие. Саратов, 1976, էջ 5:

[6] Տե՛ս **Абрашев П.,** Гражданско судопроизводство. Лекции. Том III. София, 1918, էջ 388, **Авдюков М. Г.,** Исполнение судебных решений. Москва: Госюриздат, 1960, էջ 44, **Викут М. В., Исаенкова О. В.,** Исполнительное производство. (глава 9 – հեղ.՝ О. В. Исаенкова). Москва: Юристъ, 2001, էջ 141:

[7] Տե՛ս **Крамаренко Л. К.,** Судебное исполнение в Польской народной республике (сравнительно-правовое исследование): Автореф. дис. …канд. юрид. наук. Киев, 1974, էջ 20-21:

վերաբերյալ կատարվող հարցումների և գույքի հայտարարագրման, որոնք ***արգելանքին նախորդող*** կատարողական գործողություններ են: Ըստ այդմ՝ գույքագրումը պարտապանի իրավունքների սահմանափակում չի առաջացնում:

Պարտապանի գույքի արգելանքի առանցքային տարրն այն ***տնօրինելու արգելքն է***: Պարզաբանելու համար, թե պարտապանի համար ինչ սահմանափակումներ է ենթադրում արգելադրված գույքի տնօրինման արգելքը, պետք է անդրադառնալ տնօրինման իրավազորության բովանդակությանը: ՀՀ քաղ. օր. 163-րդ հոդվածի 1-ին մասը տնօրինման իրավունքը բնորոշում է որպես գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորություն: Նույն հոդվածի 2-րդ մասը, որպես տնօրինման եղանակների ոչ սպառիչ ցանկ, նշում է գույքը որպես սեփականություն այլ անձանց օտարելը, այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները փոխանցելը, գույքը գրավ դնելը: Իրավաբանական գրականությունում, որպես տնօրինման եղանակներ, նշվում են նաև գույքը ոչնչացնելը և դեն նետելը[8]:

Ինչպես նշեցինք, օրենքն արգելադրված գույքի տնօրինման արգելքը, առանց որևէ բացառությունների, համարում է պարտադիր: Սակայն հարկ է նշել, որ արգելադրված գույքի տնօրինմանն ուղղված որոշ իրավունքների իրականացման արգելքը պարզապես անհրաժեշտ չէ գույքի վրա բռնագանձում տարածելու նպատակի համար և այդպիսով խախտում է վարչարարության համաչափության սկզբունքը («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք[9], հոդված 8): Մասնավորապես, ոչ միշտ է արդարացված արգելադրված գույքն օգտագործման հանձնելու արգելքը, քանի որ արգելադրված գույքի օգտագործումն առանձին դեպքերում ոչ միայն չի նվազեցնում գույքի որակական հատկանիշները, այլև պահպանում և ավելացնում է դրանք՝ ինչպես, օրինակ, վարելահողերի օգտագործման պարագայում: Նման դեպքերում արգելադրված գույքն օգտագործման հանձնելու ձևով տնօրինելը թույլատրելը միանգամայն արդարացված կլիներ պարտապանի օրինական շահերի ապահովման

---

[8] Տե՛ս, օրինակ, **Բարսեղյան Տ.,** Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Առաջին մաս (երրորդ հրատարակություն). – Եր., Երևանի համալսարանի հրատ., 2006, էջ 289:

[9] Ընդունվել է 18.02.2004 թ., ՀՕ-41-Ն, սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2004.03.31/18(317) Հոդ. 413:

տեսանկյունից՝ միաժամանակ չվնասելով պահանջատիրոջ շահերը: Ավելին, գույքի վարձակալությունից ստացված դրամական միջոցները նման դեպքերում ենթակա կլինեն բռնագանձման և այդպիսով կծառայեն պահանջատիրոջ պահանջի բավարարմանը: Միաժամանակ, արգելադրված գույքի բռնագանձումը չխոչընդոտելու նպատակով այդ գույքի նկատմամբ այլ անձի օգտագործման իրավունքը պետք է թույլատրվի միայն այն պայմանով, որ օգտագործումը կդադարի դրա իրացման դեպքում՝ այնպես, ինչպես որ սահմանված է գրավի կանոններով (ՀՀ քաղ. օր., 238 հոդված, 2-րդ մաս):

Արգելանքի հաջորդ տարրերը, որոնք օրենքով համարվում են ոչ պարտադիր (ֆակուլտատիվ) տարրեր, գույքի օգտագործման իրավունքը սահմանափակելը, այն առգրավելը և ի պահ հանձնելն են: Այս գործողությունները պարտապանի գույքն արգելադրելիս, ըստ օրենքի (ԴԱՀԿ մասին ՀՀ օրենք, հոդված 44, 1-ին մաս) ձևակերպման, իրականացվում են անհրաժեշտության դեպքում: Այսպես, գույքի օգտագործումն արգելելու անհրաժեշտություն ծագում է այն դեպքում, երբ օգտագործումը կարող է էապես նվազեցնել գույքի արժեքը կամ պարունակել գույքի վնասման կամ փչացման ռիսկեր: Բացի այդ, գույքն օգտագործելն ինքնաբերաբար արգելվում է, եթե հարկադիր կատարողն արգելում է նաև դրա տիրապետումը՝ առգրավելով այն: Միաժամանակ, պարտապանը կարող է շարունակել տիրապետել և օգտագործել արգելադրված գույքը, եթե այն ի պահ է հանձնվում իրեն: ԴԱՀԿ մասին ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է արգելադրվող գույքի պարտադիր առգրավման ենթակա գույքի ոչ սպառիչ ցանկ, այն է՝ շուտ փչացող գույքը, դրամը, արտարժույթը, արժեթղթերը, թանկարժեք մետաղները և քարերը, ոսկերչական և ոսկուց, արծաթից, պլատինից ու պլատինի խմբի մետաղներից, թանկարժեք քարերից և ադամանդից պատրաստված այլ զարդերը, ինչպես նաև դրանց ջարդոնը կամ այդպիսի զարդերի առանձին պատկանելիքները: Նշված գույքի՝ պարտադիր առգրավման ենթակա լինելը պայմանավորված է մի կողմից՝ պարտապանի մոտ մնալու դեպքում դրանց օտարման, փչացման, փոփոխման առավել մեծ հավանականությամբ, մյուս կողմից՝ դրանց առավել հեշտ իրացվելիությամբ:

Ինչ վերաբերում է ի պահ հանձնելուն, ապա այս գործողությունը կարող է կատարվել միայն առգրավման հետ համակցությամբ, քանի

որ որպեսզի հարկադիր կատարողը գույքն ի պահ հանձնի, նախ պետք է այն վերցնի իր տիրապետման ներքո, այսինքն՝ առգրավի: ԴԱՀԿ մասին ՀՀ օրենքի 52 հոդվածը սահմանում է, որ արգելադրված գույքը կարող է ի պահ հանձնվել ինչպես երրորդ անձի կամ պահանջատիրոջը, այնպես էլ՝ պարտապանին: Արգելադրված գույքի պահառուն նախազգուշացվում է այն վատնելու, օտարելու, թաքցնելու կամ ապօրինաբար մեկ ուրիշին հանձնելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 345 հոդվածով սահմանված պատասխանատվության մասին: Ընդ որում, նշված հանցակազմի սուբյեկտ է հանդիսանում այն անձը, ***ում այդ գույքը վստահված է եղել:*** Նկատի ունենալով քրեական իրավունքում օրենքի անալոգիայի արգելքը (ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 5)՝ հանցակազմի սուբյեկտի նման ձևակերպումը կարող է մեկնաբանվել միայն որպես այնպիսի անձ, ում արգելադրված գույքն ի պահ է հանձվել: Այնինչ, այդպիսով քրեաիրավական պաշտպանությունը կտարածվի գույքի արգելադրման միայն առանձին դեպքերի վրա, քանի որ, ինչպես նշեցինք, արգելադրված գույքն ի պահ հանձնելը ոչ պարտադիր գործողություն է և կարող է նաև չիրականացվել: Մինչդեռ, արգելադրված գույքի պատշաճ պահպանության համար պատասխանատվություն պետք է դրվի նաև արգելանքի մասին ծանուցված պարտապան սեփականատիրոջ վրա՝ ելնելով սեփականատիրոջ վրա դրված՝ գույքի պահպանման հոգսից (ՀՀ քաղ. օր, հոդված 164) և պարտապանի գույքային պատասխանատվությունից: Կարծում ենք, որ ՀՀ քրեական օրենսգրքի 345 հոդվածը՝ հանցագործության սուբյեկտի մասով, հարկ է խմբագրել նշված նկատառումներից ելնելով: Ասվածն առավել արդիական է արգելադրված անշարժ գույքի նկատմամբ ապօրինի գործողություններ կատարելու դեպքում (բացի պետական գրանցման ենթակա գործարքներ կնքելու), քանի որ քաղաքացիական իրավունքում անշարժ գույքի պահատվությունն ավանդաբար բացառվում է[10]: Անշարժ գույքի նկատմամբ կարող է կնքվել ոչ թե պահատվության, այլ պահպանության պայմանագիր, որով տիրապետման փոխանցում տեղի չի ունենում:

---

[10] Տե՛ս **Иоффе О. С.,** Обязательственное право. Москва: Юрид. лит., 1975, էջ 495, **Мейер Д. И.,** Русское гражданское право. Москва: Статут, 2000, էջ 631, Гражданское право: Учебник. Изд. второе / Под ред. проф. А. П. Сергеева, проф. Ю. К. Толстого. Том 3. Москва, Проспект, 2000, էջ 609:

Անդրադառնալով պարտապանի գույքի արգելադրման պահից պահանջատիրոջ համար ծագող իրավունքներին՝ նախ պետք է նշել, որ մինչև պարտապանի գույքի արգելադրումը պահանջատերն ունի միայն պարտավորական իրավունք՝ բավարարում ստանալու պարտապանի ամբողջ գույքի արժեքից՝ այն գույքի, որն առկա կլինի պահանջի բավարարման պահին (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդվածներ 27, 60, 130 և 281): Մինչդեռ, եթե այդ իրավունքը պարտապանի ողջ գույքի՝ որպես համակցության նկատմամբ է, ապա արգելանքը սահմանափակում է կոնկրետ իրի կամ գույքային իրավունքի (պահանջի)[11] շրջանառությունը: Երկրորդ, եթե մինչև գույքի արգելադրումը պարտապանն ազատ է տնօրինելու իր գույքը, ապա արգելադրված գույքի տնօրինման իրավունքից նա զրկվում է: Երրորդ, արգելադրման դեպքում պահանջատերը, ում պահանջով արգելադրվել է գույքը, առավելություն է ստանում նույն հերթի այլ պահանջատերերի նկատմամբ, ովքեր իրենց պահանջն ավելի ուշ են ներկայացնում հարկադիր կատարման (ԴԱՀԿ մասին ՀՀ օրենք, հոդված 69), մինչդեռ նախքան արգելանքի կիրառումը պահանջի բավարարման առաջնահերթություն որևէ պարտատեր չունի, բացառությամբ առանձին տեսակի պահանջներից: Վերջին դեպքում, իհարկե, արգելանքը չի տալիս այն առավելությունը, որը տալիս է գրավը, քանի որ տվյալ պահանջատերն առավելություն է ստանում միայն իր հերթում ընդգրկված այլ պահանջատերերի նկատմամբ, և օրենքով ավելի վաղ հերթի դասված պահանջները շարունակում են պահպանել առավելություն դրա նկատմամբ՝ անկախ պահանջի ներկայացման պահից:

Այսպիսով, պարտապանի գույքի նկատմամբ արգելանքի կիրառման պահից պահանջատերը ձեռք է բերում արգելադրված կոնկրետ գույքի արժեքից իր պահանջի բավարարում ստանալու իրավունք, որին բնորոշ են սովորական գրավին բնորոշ որոշակի հստակ իրային-իրավական հատկանիշներ: Գրավի իրավունքի համեմատությամբ առկա տարբերությունը կայանում է նախապատվության իրավունքի սահմանափակության մեջ. պահանջատերն իր պահանջի բավարարման նախապատվություն է ձեռք բերում միայն օրենքում սահմանված իր հերթում գտնվող այլ՝ ավելի ուշ ներկայացված պահանջների

[11] ԴԱՀԿ մասին ՀՀ օրենքը չի սահմանել գույքային իրավունքների (պահանջների) նկատմամբ բռնագանձում տարածելու կարգ, ինչն օրենսդրի բացթողումը պետք է համարել:

նկատմամբ: Իսկ այն հանգամանքը, որ պահանջատերը գույքի նկատմամբ իր իրավունքն իրականացնում է ոչ անմիջականորեն, այլ հարկադիր կատարողի միջոցով, արգելանքի իրային-իրավական հատկանիշների ժխտման փաստարկ լինել չի կարող, քանի որ տվյալ դեպքում հարկադիր կատարողը նյութահիրավական հարաբերությունների սուբյեկտ չէ, և իր լիազորությունները գործադրում է հենց պահանջատիրոջ շահերից ելնելով՝ նրա պահանջը բավարարելու նպատակով:

Արգելանքի իրային-իրավական հատկանիշների վերհանումն առանցքային նշանակություն ունի և՛ տեսական, և՛ գործնական մեծ նշանակություն ունեցող հետևյալ հարցի լուծման համար. արգելադրված, սակայն արգելանքի խախտմամբ օտարված գույքի վրա բռնագանձում կարող է տարածվել միայն օտարման գործարքն անվավեր ճանաչելուց հետո՞, թե՞ առանց այդ գործարքի անվավեր ճանաչման: Սկզբունքորեն չպետք է առաջանա իրավիճակ, երբ պարտապանն արգելադրված գույքն ի սեփականություն հանձնի այլ անձի, քանի որ արգելանքի կիրառմամբ նրան արգելված է տնօրինել գույքը: Ավելին, արգելանքի խախտմամբ գույքի օտարումը և այլ ապօրինի գործողություններն առաջացնում են քրեական պատասխանատվություն (ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 345):

Մեր կարծիքով, այս հարցը պետք է լուծվի իրային իրավունքների անալոգիայով դրանց բնորոշ՝ «հետևելու» հատկանիշը արգելանքի դեպքում ևս օրենսդրորեն ամրագրելու միջոցով: Համանման տեսակետ, թեև առանց արգելանքի իրային-իրավական հատկանիշների ընդգծման, հանդիպում է նաև գրականության մեջ: Այսպես, Կ. Ի. Սկլովսկին նշում է, որ արգելանքի էությունը կայանում է ոչ թե արգելադրված գույքի տնօրինման վիճարկելիության մեջ, այլ արգելադրված գույքի նկատմամբ անմիջական բռնագանձում տարածելու մեջ[12]:

Այսպիսով, անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել, որ արգելադրված գույքի օտարման դեպքում արգելանքը պահպանվում է, իսկ արգելադրված գույքը կարող է առգրավվել և հարկադիր իրացվել:

---

[12] Տե՛ս **Скловский К.,** Залог, арест имущества, иск как способы обеспечения прав кредиторов // РЮ, 1997 - № 2. http://www.lawmix.ru/comm/8498 - 11.10.2014

Այժմ քննարկենք արգելանքի գործողության ժամանակային ասպեկտը: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 60 հոդվածը նախատեսում է գրավոր վարչական ակտերի ուժի մեջ մտնելու երկու տարբերակ՝ ա) այդ ակտի ընդունման մասին դրա հասցեատիրոջն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ, բ) եթե վարչական ակտը պարունակում է այնպիսի դրույթներ, որոնք ակտի որևէ մասով ուժի մեջ մտնելը կապում են որոշակի պայմանների կամ հանգամանքների առաջացման հետ (պայմանով ակտ), ապա վարչական ակտն այդ մասով ուժի մեջ է մտնում համապատասխան պայմանի կամ հանգամանքի առաջացման պահից:

Արգելանքի (դրանով պարտապանի համար ծագող սահմանափակումների) գործողությունն ընդհանուր առմամբ ենթարկվում է այս կանոններին, որոշակի բացառություններով, որոնք պետք է քննարկել ելնելով արգելադրվող գույքի բացահայտման միջոցից: Այսպես, հայտարարագրման և գույքագրման միջոցներով պարտապանի գույքը բացահայտելու դեպքում հարկադիր կատարողը պետք է անհապաղ լուծի բացահայտված գույքի (դրա մի մասի) արգելադրման հարցը, և արգելանք կիրառելու պարագայում այն պետք է ուժի մեջ մտնի հենց պարտապանին տեղեկանացնելու պահից, այլ ոչ թե տեղեկացման հաջորդ օրվանից, ինչպես սահմանում է ընդհանուր կանոնը: Նման օպերատիվությունը, ելնելով կատարողական վարույթի՝ որպես առանձին տեսակի վարչական վարույթի բնույթից, անհրաժեշտ է, քանի որ հակառակ պարագայում պարտապանը կարող է կիրառվող սահմանափակումներին հակասող գործողություններ կատարել և բռնագանձումն անհնարին դարձնել նաև ժամերի ընթացքում: Թեև այս առանձնահատկությունը բխում է ԴԱՀԿ մասին ՀՀ օրենքի կարգավորման ողջ տրամաբանությունից, սակայն ուղղակիորեն սահմանված չէ օրենքում, ինչը, մեր կարծիքով, անհրաժեշտ է:

Որոշակի առանձնահատկություններ կան հարցումների միջոցով պարտապանի գույքը բացահայտելու դեպքում արգելանքի ուժի մեջ մտնելիս: Խոսքն այն դեպքերի մասին է, երբ հարցում ստացող կազմակերպությունը կամ պետական մարմինը իրականացնում է պարտապանի գույքի նկատմամբ իրավունքների ծագման, փոփոխման, դադարման պետական գրանցում (հաշվառում) կամ պարտա-

պանի դրամական միջոցների փոխանցում և դուրսգրում: Այդպիսիք են, օրինակ, անշարժ գույքի, ավտոտրանսպորտային միջոցների նկատմամբ իրավունքների պետական գրանցման (հաշվառման) մարմինները, առևտրային բանկերը: Պետական գրանցման (հաշվառման) ենթակա իրավունքները չգրանցվելու (չհաշվառվելու) դեպքում պետության կողմից չեն ճանաչվում, իսկ համապատասխան գործարքներն առոչինչ են (ՀՀ քաղ. օր., հոդված 10, 2-րդ մաս, հոդված 135, 1-ին մաս, հոդված 302, «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենք[13], հոդված 13, 5-րդ մաս): Բանկային հաշվով գործառնությունները ևս կարող են կատարվել, թեև հաճախորդի (պարտապանի) հանձնարարությամբ, սակայն բանկի կողմից (ՀՀ քաղ. օր., հոդված 912):

Այսպիսով, քննարկվող դեպքերում պարտապանի գույքի փոխանցումը կամ այլ անձանց իրավունքներով ծանրաբեռնելը կախվածության մեջ է գրանցող (հաշվառող) մարմնի, առևտրային բանկի գործողություններից, ինչը հնարավորություն է տալիս արգելանքը կիրառել առավել օպերատիվ և արդյունավետ՝ անմիջապես այդ կազմակերպությունների միջոցով: Նշվածը նաև հնարավորություն է տալիս չսպասել պարտապանի գույքի վերաբերյալ հարցման պատասխանին՝ բացառելու համար այդ ժամանակամիջոցում պարտապանի գույքի տնօրինման ռիսկը, և հարցման հետ միասին ուղարկել նաև արգելանք կիրառելու մասին որոշում՝ վերջինիս գործողությունը և ուժի մեջ մտնելը պայմանավորելով հարցումը ստացող կազմակերպությունում հաշվառված (գրանցված) պարտապանի գույքի առկայությամբ (պայմանով արգելանք): Գույքի առկայության դեպքում այդպիսի արգելանքն ուժի մեջ կմտնի արգելանքի որոշումը ստացող կազմակերպության կամ մարմնի կողմից ստանալու պահից:

Այստեղ, սակայն, պետք է հաշվի առնել մեկ կարևոր հանգամանք. արգելադրված գույքի տնօրինման արգելքով արգելվում է ոչ միայն պետական գրանցման ենթակա իրավունքների փոխանցումը, այլ նաև գույքի փաստացի ֆիզիկական վիճակի փոփոխությունը, վերափոխումը, ոչնչացումը: Հետևաբար, արգելանքը միայն գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մարմնում գրանցե-

[13] Ընդունվել է 08.07.2005 թ., ՀՕ-166-Ն, սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2005.08.24/54(426) Հոդ. 1024:

լը բավարար չէ տնօրինման արգելքն ամբողջությամբ իրագործելու համար: Ասվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ արգելանքը գրանցող մարմնում կամ կազմակերպությունում գրանցվելու պահից ուժի մեջ են մտնում գրանցման ենթակա իրավունքների սահմանափակումները, իսկ մնացած մասով արգելանքն ուժի մեջ է մտնում և գործում է պարտապանին իրազեկելու պահից:

Արգելանքի ժամանակային գործողությունը բնութագրող հաջորդ ասպեկտը ապագայում ձեռք բերվելիք գույքի նկատմամբ արգելանքի կիրառման հնարավորությունն է: Ապագայում ձեռքբերվելիք գույքի նկատմամբ արգելանքի կիրառելիությունն առավելապես կարևորվում է կատարողական վարույթի ավարտման (ԴԱՀԿ մասին ՀՀ օրենք, հոդված 41) այն դեպքերում, երբ արգելանքները պահպանվում են, և պահանջատերը հնարավորություն է ունենում հետագայում կրկին կատարման ներկայացնել իր՝ մասնակի կամ ամբողջությամբ չբավարարված պահանջը: Գրականության մեջ առաջարկվում է բռնագանձման օբյեկտ համարել նաև արգելանքին հաջորդող ժամանակաշրջանում պարտապանի բանկային հաշվին մուտքագրվող միջոցները, որոնք չպետք է հաշվեգրվեն հաշվին, այլ պետք է փոխանցվեն ԴԱՀԿ ծառայության դեպոզիտ հաշվին: Նույն հեղինակն առաջարկում է, որպես հարկադիր կատարման նոր միջոց, երրորդ անձանց արգելել պարտապանին փոխանցել գույք կամ կատարել այլ պարտավորություն՝ պարտավորեցնելով նրանց նման պարտավորությունը կատարել հարկադիր կատարողի ներկայությամբ՝ այն հաշվով, վերջինս հնարավորություն ունենա բռնագանձում տարածելու պարտավորության կատարման առարկայի վրա[14]: Ներկայացված երկու առաջարկն էլ իրենց էությամբ պարտապանի կողմից ապագայում ձեռքբերվելիք գույքի նկատմամբ արգելանք կիրառելու մասնավոր դրսևորումներ են, ուստի խնդիրը լուծելու համար հարկ է նախատեսել առավել ընդհանուր կարգավորում, ընդ որում՝ առանց հարկադիր կատարման նոր միջոց ստեղծելու և երրորդ անձանց նկատմամբ դժվար իրագործելի արգելքներ սահմանելու:

Իսկ խնդրի լուծումը կայանում է պարտապանի գույքի բացահայտման կառուցակարգերի կատարելագործման մեջ՝ ներառելով

---

[14] Տե՛ս **Куракова Н. В.,** Исполнительное производство: обращение взыскания на имущества должника-организации, дисс. … кандидата юрид. наук. Москва, 2004, էջ 9-11:

հետագայում ձեռքբերվող գույքի բացահայտման հնարավորություն: Հայտարարագրման միջոցով գույքի բացահայտման դեպքում պարտապանի վրա պետք է պարտականություն դրվի հարկադիր կատարողին հայտնելու իր կողմից հետագայում ձեռք բերվող գույքի մասին, և այդ պարտականությունը պետք է ապահովվի այն նույն քրեական պատասխանատվությամբ, որով ապահովված է հայտարարագրման պարտականությունը:

Նույն կերպ, հարցումների միջոցով, գույքի բացահայտման դեպքում հարցումը պետք է ներառի նաև հետագայում պարտապանի կողմից ձեռքբերվող գույքի մասին տեղեկացնելու՝ հարցումը ստացող կազմակերպությանն ուղղվող պահանջ:

Պետք է նշել, որ ՀՀ օրենսդրությունը հետագայում ձեռք բերվող գույքն արգելադրելու իրական կառուցակարգ սահմանել է միայն պարտապանի բանկային հաշիվներում և ավանդներում պահվող դրամական միջոցների պարագայում (տե՛ս ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի 29.08.2006 թ. թիվ 520-Ն որոշմամբ հաստատված ձև 1-ը և ձև 2-ը՝ համապատասխանաբար՝ պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին որոշում և պարտապանի դրամական միջոցների վրա բռնագանձում տարածելու մասին որոշում):

Հետևաբար, անհրաժեշտ ենք համարում մեր կողմից առաջարկվող կառուցակարգերի ներդրումը նաև պարտապանի այլ գույքի պարագայում՝ հետագայում ձեռքբերվող գույքի նկատմամբ արգելանք կիրառելու հնարավորությունն ապահովելու նպատակով:

Ваагн Даллакян
Аспирант кафедры гражданского процесса ЕГУ

ЮРИДИЧЕСКАЯ ПРИРОДА И ПОСЛЕДСТВИЯ АРЕСТА, НАЛАГАЕМОГО НА ИМУЩЕСТВО ДОЛЖНИКА

В статье обсуждаются юридические последствия, возникающие для должника и взыскателя вследствие наложения ареста на имущество должника. Выявляются вещно-правовые свойства власти взыскателя над имуществом должника, возникающие с момента применения ареста. Обсуждаются вопросы момента вступления ареста в силу. Предлагается идея применения ареста на приобретаемое в будущем имущество.

Vahagn Dallakyan
PhD student of the YSU Chair of Civil Procedure

LEGAL NATURE OF THE ARREST IMPOSED ON DEBTOR'S PROPERTY AND ITS CONSEQUENCES

The legal consequences arising for the debtor and the creditor as a result of arresting the debtor's property are discussed in the article. The property related legal characteristics of the creditor's power, in respect of the debtor's property from the moment of arresting, are being investigated. The issues related to the moment of the arrest to come into force are also discussed. The concept of imposing arrest on property to be acquired in future is suggested.

Բանալի բառեր՝ *արգելանք, գույքագրում, տնօրինման արգելք, պահատվություն, իրային իրավունքներ:*
Ключевые слова: *арест, опись, запрет на распоряжение, хранение, вещные права.*
Key words: *arrest, inventory, disposition ban, custody, property rights.*